



ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան

20.10.2017թ.


2017 թվականի հոկտեմբերի 9-12-ին Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունում ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված սեմինարների և հոկտեմբերի 10-11-ին կայացած Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի (համաժողովի) Բյուրոյի նիստի մասին

2017թ. հոկտեմբերի 9-ին Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունում (ՀՀ ԱՎԾ) անցկացվեց ազգային սեմինար Ընդհանուր Վիճակագրական Բիզնես Գործընթացի Մոդելի (GSBPM) և Վիճակագրական Կազմակերպությունների համար Ընդհանուր Գործունեության Մոդելի (GAMSO) վերաբերյալ: Ազգային սեմինարը ՀՀ ԱՎԾ անձնակազմի համար վարում էին ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (ՄԱԿ ԵՏՀ) Վիճակագրական բաժնի տնօրեն Լիդիա Բրատանովան, ՄԱԿ-ի ԵՏՀ-ի Վիճակագրական բաժնի Ավագ վիճակագիր և տարածաշրջանային խորհրդական Սթիվեն Վեյը և փորձագետ Թերեզա Լահորը:

Ազգային սեմինարին ներկայացվեցին և քննարկվեցին հետևյալ թեմաները. GSBPM-ի համատեքստը՝ ստանդարտների վրա հիմնված մոդերնիզացում, GSBPM-ի ներկայացում՝ պատմությունը, օգտագործումն ու ազգային իրականացումները, Տվյալների արտադրման գործընթացների քարտեզագրումը համաձայն GSBPM-ի, GSBPM-ը փաստաթղթավորման, որակի և մեթատվյալների կառավարման մեջ, GAMSO-ի ներկայացում, Հարակից ստանդարտներ և մոդելներ՝ Ընդհանուր Վիճակագրական Տեղեկատվության Մոդել (GSIM) և Ընդհանուր Վիճակագրության Արտադրության Ճարտարապետություն (GSPA), GSBPM-ի և GAMSO-ի հետագա զարգացումները: Սեմինարի ժամանակ հատուկ նիստ անցկացվեց ՄԱԿ-ի ԵՏՀ-ի աշխատանքի վերաբերյալ: Սեմինարին մասնակցեց թվով 70 աշխատակից:

2017թ. հոկտեմբերի 10-11-ը ՀՀ ԱՎԾ-ում տեղի ունեցավ Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի Բյուրոյի նիստը:

Բյուրոյի նիստը նախագահում էր Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի և Բյուրոյի նախագահ, Ֆինլանդիայի վիճակագրության գլխավոր տնօրեն տիկին Մարյո Բրուունը: Նիստին մասնակցեցին Բյուրոյի փոխնախագահներ՝ Ավստրիայի,



Կանադայի, Խորվաթիայի, Մեքսիկայի, Միացյալ Թագավորության և Հայաստանի վիճակագրական ծառայության ղեկավարները, ՄԱԿ-ի ԵՏՀ քարտուղարությունից ՄԱԿ-ի ԵՏՀ վիճակագրական բաժնի տնօրենը, Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի քարտուղարը, ինչպես նաև Բյուրոյի մշտական դիտորդները՝ ԱՊՀ Միջպետական վիճակագրական կոմիտեի նախագահը, Եվրամիության Վիճակագրական գրասենյակի (Եվրոստատ) գործող գլխավոր տնօրենը, Արժույթի միջազգային հիմնադրամի վիճակագրության դեպարտամենտի տնօրենի տեղակալը, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության վիճակագրության տնօրինության տնօրենը (Կոնֆերանսի, Բյուրոյի և Բյուրոյի կազմի մասին տեղեկատվությունը, տես՝ <http://www.unece.org/stats/cesbureau.html>) :

2017թ. հոկտեմբերի 10-ին Հայաստանի Հանրապետության Նախագահը ընդունել է Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի Բյուրոյի անդամներին և մշտական դիտորդներին՝ Բյուրոյի նախագահ Մարյո Բրուունի գլխավորությամբ (<http://www.president.am/hy/press-release/item/2017/10/10/President-Serzh-Sargsyan-received-members-of-European-Statistics-Conference/>) :

2017թ. հոկտեմբերի 11-ին ՀՀ ԱՎԾ անձնակազմի համար անցկացվեց Ռազմավարական խորհրդակցություն Հայաստանում սեռային վիճակագրության զարգացման մասին, որը վարում էր ՄԱԿ-ի ԵՏՀ փորձագետ Ֆիոնա Վիլլիս-Նունեզը: Խորհրդակցությանը մասնակցում էր թվով 13 աշխատակից:

2017թ. հոկտեմբերի 12-ին ՀՀ ԱՎԾ դահլիճում անցկացվեց «Կայուն զարգացման նպատակների (ԿՁՆ) վիճակագրությունը Հայաստանում ճանապարհային քարտեզի մշակում հիմնական շահառուների հետ» խորագրով ազգային սեմինար:

Սեմինարին ներկայացվեցին և քննարկվեցին հետևյալ թեմաները.

1. Զարգացումները գլոբալ և տարածաշրջանային մակարդակում,
2. ԿՁՆ-ի համար վիճակագրությունը Հայաստանում,
3. ԿՁՆ-ի համար վիճակագրության Ազգային ճանապարհային քարտեզի մշակում:

Սեմինարին մասնակցեց թվով 85 անձ, որից 55-ը՝ ՀՀ ԱՎԾ-ից, իսկ 30-ը՝ ներկայացնում էին հետևյալ պետական կառավարման մարմինները՝ ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ արտաքին գործերի նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, ՀՀ սպորտի և երտասարդության հարցերի նախարարություն, ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն, ՀՀ մշակույթի նախարարություն, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն, ՀՀ սփյուռքի նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն, ՀՀ կառավարությանն առնչվող պետական գույքի կառավարման վարչություն, ինչպես նաև Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն, ՄԱԿ-ի կառույցներից՝ ՄԱԿ-ի զարգացման ծրագիր, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ և ՄԱԿ-ի փախստականների հարցերով զերագույն հանձնակատարի գրասենյակ: